



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԵՐՈՒՍԱԳԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԿԱԿԱՆ ԱԲՈՈՒՐ



րուսաղեմը իր հնուրյամբ աստվածաշնչական փառափ է և բացառիկ հանգամանք է ներկայացնում ամբողջ աշխարհի պատմության մեջ: Քաղաքը հիմնադրվել է մեր թվարկությունից շատ առաջ, ըստ Աստվածաշնչի վկայության՝ Մելքիսեդեկի կողմից, որը ֆահանայապետը և բազմաթիվ էր իր իսկ հիմնադրած փառափ, խորհրդավոր անվամբ կոչված Սաղեմ՝ խաղաղություն, որովհետև հաշտության միջնորդը՝ Հիսուս Քրիստոս, այդ փառափում հաստատելու էր խաղաղությունը Աստուծո և մարդկանց միջև: Սաղեմ անունն առաջին անգամ հիշատակվում է Մենդոց գրքում (ԺԿ 18): Սաղեմի հիմնադրությունից կես դար հետո հեբրուսացիք տիրեցին փառափին և այն իրենց նախահոր՝ Հեբրուսի անունով կոչեցին Երուսաղեմ կամ Երուշալեմ: Իսրայելի Դավիթ բազմաթիվ վերագրվեց այն, և Երուսաղեմը դարձավ կրոնական, փառափական ու մշակութային կենտրոնը Հուդայի թագավորության:

Բայց Երուսաղեմը մանավանդ թովանդակ քրիստոնյա աշխարհի համար դարձավ Ս. Քաղաք՝ «փառափ յափտեմական թագաւորի» և մարդայնյա Աստուծո, Փրկչի երկրավոր կյանքի փառքը հուշերով նվիրականացած և շքեմացած:

Այդ սուրբ հողերի վրա էր, որ ծնվեց երկնավոր Վարդապետը, այնտեղ է որ ապրեց, փառքեց, եղբայրացավ մարդկային տառապանքի հետ և խաչվեց՝ Իր արյունը թափելով մարդկության սիրտուն ու փրկության համար, և այդ սուրբ հողի ծոցից հարություն առավ և համբարձավ:

Առհասարակ Պաղեստինը և ի մասնավորի Երուսաղեմը հարուստ է աստվածաշնչական սրտագրավ հուշերով և Քրիստոսի կյանքի ու փառքության հետ սերտորեն կապված նվիրական հիշատակներով: Այսօր էլ Երուսաղեմում ամեն մի փար, ամեն մի թուփ խոսում է մարդկային սրտին և պատմում Քրիստոսի մասին:

Դ դարում, երբ քրիստոնեությունը հոռմեական կայսրության մեջ պաշտոնապես պետական կրոն հռչակվեց, Պաղեստինում, Երուսաղեմում քրիստոնեական փառավոր կորողներ՝ տանաբներ բարձրացան Քրիստոսի կյանքի և գործունեության հետ կապված ամենանվիրական այդ սրբավայրերի վրա, ինչպիսին էին Քերթեմեմում՝ Ս. Մենդյան, Երուսաղեմում՝ Ս. Հարության, Համբարձման և Գալիլիայում, Թաբոր լեռան վրա՝ Այլակերպության եկեղեցիները, ու բազմաթիվ այլ մատուռներ և ուխտավայրեր, որոնք հիշեցնում էին Քրիստոսի փրկագործ շարժարանները և հավերժացնում՝ նրա կյանքի հետ կապված փառքը հիշատակները: Այսօր էլ, ամբողջ տարին, երկրագնդի տարբեր մասերից հավատացյալների և ուխտավորների բարեպաշտական խմբեր, առանց ազգի և դավանանքի խտրության, ուխտի են գալիս Ս. Երուսաղեմ՝ ծննդաբերելու և աղոթելու այդ սրբավայրերի առաջ, որոնք սերտորեն կապված են մեր Փրկչի կյանքի հետ:

Ս. Երուսաղեմը, բացի համակրոնական և քրիստոնեության միջազգային ոստան լինելու իր հանգամանքից, բանկ է մանավանդ հայերիս համար նրանով, որ քրիստոնեության առաջին դարերից սկսյալ, հայ ժողովրդի

անունը կապված է եղել Ս. Երկրի սրբավայրերի շինության և պահպանության գործի հետ, և լավագույն հարաբերություններ են հաստատվել շատ վաղուց Մայր Երկրի և Երուսաղեմի միջև, և այդ հարաբերությունները կազմել են հետագայում Կորիզը ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ:

Պատմական փաստերը խոսում են այն մասին, որ Բրիտանիայի անաշին դարերից սկիզբ է առել Հայ Երուսաղեմը, որը ժամանակի ընթացքում անել, զարգացել է, հանդիսանալով մեր եվրոպետական Արևմտյան մեկը, որպես Երուսաղեմի Հայոց Պատրիարքական Արքո: Հայ ժողովուրդն իր բարեպաշտական լուսններով, հավատի ջերմությամբ և անսահման գոհողություններով, Մայր Հողից հազարավոր կիրովմեթոսներով հեռու գտնվող այդ Արքոն պահել է իր աչքի լույսի պես: Մեր ժողովուրդը սիրել է Ս. Երուսաղեմը իր հոգու թովանդակ ջերմությամբ և եվրոպետներ է իր լավագույնը Հայ Երուսաղեմի համար:

Է դարու պատմիչ Հերոպոլիտեսի Անաստաս վարդապետը, որը Համագասպ Կամսարական Պահլավունի իշխանի խնդրանքով այցելում է Ս. Երուսաղեմ և շրջում ողջ Պաղեստինը, իր «Վան վանդակից Հայոց որ յԵրուսաղեմ» գրքում վկայում է, որ է դարում հայերը Ս. Երկրում ունեին 70 վանքեր. «Ի ժամանակս քաղաքութեան Տրդատայ և ի հայրապետութեան Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, մեծամեծ իշխանքն հայոց շինեցին վանորայք ի սուրբ քաղաքն Երուսաղեմ...: Ամենայն բովանդակ եօրանասուն վանք շինեալ եղև իշխանաց հայոց ի սուրբ քաղաքն յԵրուսաղեմ, ի տեղիս տնօրինականացն Քրիստոսի և յայլ աստուածակոխ տեղիսն: Եւ գմեծամեծ եկեղեցիքն, գրողգոթա, գՄնունդն, գՍուրբ Յակոբն, գՀրեշտակապետն և գՓրկիչն, գՎերնատունն և գՀամբարձումն, գՃառներն և գԽաչքիտն, գԹորանն Լուսաւորչին և գաստուածընկալ Գերեզմանն, շինեալ եղև ի քաղաքորէն Տրդատայ և ի Սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն»:

Մովսես Կաղանկատվացի և ուրիշ հիշատակագիրներ էլ են հիշում, որ Երուսաղեմում եղել են հայոց սեփական 70-ից ավելի վանքեր, որոնցից 7-ը՝ Աղվանից պատկանող: Այդ վանքերից շատերի շինությունը բարձրանում է մինչև Գրիգոր Լուսավորիչ և Տրդատ: Նրանց շինությանը մասնակցել են հայ նախարարը, հայ իշխանը, հայ շինականը, և բոլոր շինված՝ «ԹՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳԻՈՑ ԵՒ Ի ՅԻՇԱՍԱՆԿ ԱՋԳԻՍ ՀԱՅՈՑ»:

Երուսաղեմում հայ հնադարյան վանքերի և կրոնական, մշակութային այլ հաստատու-

թյունների գոյությունը ինքնին պերճախոս վկան է և պատմական ապացույցը Երուսաղեմում Հայոց եկեղեցու գրաված բարձր դիրքի և հայ մշակույթի զարգացման Ս. Երկրում:

Նույնքան հին է Ս. Երուսաղեմի Հայոց Պատրիարքական Արքոն: Մինչև Քաղկեդոնի ժողովը Երուսաղեմում գտնվող ու ապրող բոլոր Բրիտանիայ ժողովուրդներն ու ազգերը պատկանում էին Բրիտանեական Ընդհանուր եկեղեցուն և զավակներն էին ու հավատացյալները մի, Առաքելական և Սուրբ եկեղեցու: Հավատացյալները քեև լեզվով և ազգությամբ բաժանվում էին միմյանցից, բայց կրոնով և եկեղեցով միացել էին և համախմբված պատրիարքական-հայրապետական միակ իշխանության ներքև: «Այդ օրերին հավասարապես բարեպաշտական մի հավատք էր տիրում հռոմեներին, հայերի, վրացիներին և աղվանից աշխարհիկներին»:

Քաղկեդոնը պատակտեց եկեղեցական միասնությունը և կազմվեցին «ազգային եկեղեցի»-ներ Երուսաղեմում: Հայ և հույն դավանությանց միջև առաջացավ հերձված և հայերը, ի գլուխ ունենալով Երուսաղեմի հայ միաբանությունը, խորապես վշտացած և ծանձրացած Երուսաղեմում հույն քաղկեդոնական հոգևորականների հալածանքներից, համախմբվեցին Ս. Հակոբյանց վանքում իրենց եպիսկոպոսապետի մոտ, և ավելի էս ընդարձակելով իրենց եպիսկոպոսապետի հոգևոր իշխանությունը, որ արդեն իսկ Ս. Հակոբ Տյառնեղբոր Արքոն տերն էր, որոշեցին ընտրել իրենց համար նոր Պատրիարք և կառավարվել ինքնուրույն: «Մինչև այսօր ալ այդպես են մեր պատրիարքներն, որոնք առաջին քահանայապետին՝ Ս. Հակոբ Տյառնեղբոր հարազատ հաջորդներն են փոխանորդները ըլլալով՝ անոր Արքոնն ալ տերն են» (Տիգրան Սավալանյանց, «Պատմություն Երուսաղեմի», Ա հատ., էջ 247—248):

Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունը, Բրիտանիայի միջազգային այդ ոստանին մեջ, դարուց ի դարս, չնայած քաղաքական դժոխակ պայմանների և միջեկեղեցական ու դավանաբանական սուր պայքարների, բյուզանդական վեների, կառոլացել է պահել իր դիրքն ու հեղինակությունը:

Երուսաղեմում կան պատմականորեն կազմված երեք պատրիարքություններ՝ Հայ, Հույն և Կարոլիկ եկեղեցիների, որոնք միասին վերցրած իրավաստերն ու պահապանն են Ս. Երկրի Բրիտանեական միջազգային բոլոր սրբավայրերի: Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունը, Հույն և Լատին Պատրիարքությանց հետ, հավասար իրավունքներով, ամենօրյա սրբազան պաշտամունքներ է մա-

տուցում Քերթեհեմի Ս. Մենդյան աչրի եկեղեցում, Երուսաղեմի Ս. Հարություն Տանարուս Քրիստոսի Ս. Գերեզմանի վրա, ինչպես նաև Սաղիմական մյուս գլխավոր սրբավայրերում: Երուսաղեմում Հայոց Պատրիարքական Աթոռի համազգային սեփականությունն ու սուրբ տեղաց իրավունքները նվիրագործված են դարավոր ավանդություններով, բնորոշված միջազգային օրենքներով և հաստատված Ս. Երկրում հաջորդաբար իշխող կառավարությունների պետական հրովարտակներով:

Երուսաղեմում Հայ եկեղեցու ունեցած միջազգային սրբավայրերից հետո, Հայ Երուսաղեմի փառն ու պատիվն է կազմում հայոց Սրբոց Հակոբյանց դարավոր վանքը Սիոն լեռան վրա: Քրիստոսի կյանքի հետ կապված գլխավոր սրբավայրերից հետո, պատմական մեծագույն արժեք ենթակայացնող սրբավայրը Երուսաղեմի հայոց Սրբոց Հակոբյանց Մայր Տանարն է, ուր բաղվել է առաջին նահատակ առաքյալի՝ Հակոբոս Զբեբդիայի՝ Հովհաննես ավետարանչի եղբոր գլուխը, և որը համազգային ուխտավայր է Ս. ՀԱԿՈՅ ԳԼԽԱԳԻՆ՝ անունով, և որ միաժամանակ եղել է բնակարան և Աթոռ Երուսաղեմի առաջին եպիսկոպոս ՀԱԿՈՒՐԱՍ ՏՅԱՌՆՆԵՎՐԱՅՐ կոչված առաքյալին, և ուր ամփոփված է նաև նրա մարմինը: Այս պատմական և նվիրական սրբավայրի շուրջն է, որ հաստատվել է Սրբոց Հակոբյանց վանքը, ի հիշատակ նույնանուն երկու առաքյալների:

Սրբոց Հակոբյանց վանքը իր մեջ բովանդակում է Սրբոց Հակոբյանց հիմնավորց և գեղակերտ Մայր Տանարը, Ս. Հրեշտակապետաց և Ս. Թորոս եկեղեցիները, Ս. Փրկիչ վանքը, ազգային գերեզմանատունը, հոյակապ Պատրիարքարանը, Ժառանգավորաց վարժարանը և Ընծայարանը, Ս. Թարգմանչաց վարժարանը, Կյուպյեկկյան մատենադարանը և միաբանական այլ հարկաբաժիններ:

Հայ Երուսաղեմը, որպես ազգային, կրոնական և մշակութային հաստատություն, իր պատմությամբ, արժեքով և գործունեությամբ, շարունակ միշտ իրեն կապված է պահել բովանդակ հայության սիրտն ու ուշադրությունը: Հայ ժողովուրդն իր լուսն չի խնայել երբեք՝ շեն ու պայծառ պահելու համար Հայ Երուսաղեմը, Քրիստոսի Ս. Գերեզմանի վրա պլպլացող Լուսավորչի կանթեղը:

Հայ Երուսաղեմը, որպես համազգային և կրոնական հաստատություն, սրբությամբ և պատվով է կատարել իր դերը մեր ժողովրդի կրոնական, կրթական և մշակութային կյանքում: Հայ ժողովրդի Երախտագետ սրտում միշտ բարձր կմնա լուսապայծառ հիշատակ-

ները Երուսաղեմի Ս. Աթոռի բազմաբախտ հայրապետների՝ Գրիգոր Ե Պարոնտերի, Գրիգոր Զ Շիրազակի, Հովհաննես Զմյուռնիացու, Եսայի Կեսարացու, Վեհապետյան, Գուրջյան և Գուշակյան մեծանուն պատրիարքների:

Մեր եկեղեցական նվիրապետության մեջ Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունը գրավում է յուրահատուկ տեղ. Ս. էջմիածնից հետո Երուսաղեմի Հայոց Պատրիարքական Աթոռը մեր կրոնական կարևորագույն մեծագույն կենտրոնն է, որպես Առաքելական Աթոռ քրիստոնեական միջազգային սրբավայրերի: Մայր Աթոռ Ս. էջմիածնի և Երուսաղեմի Պատրիարքության հարաբերությունները միշտ եղել են ավելի քան եղբայրական: Ս. էջմիածնի և Ս. Երուսաղեմի միջև չի եղել հակամարտություն, անհասկացողություն: Ս. Երուսաղեմը, որպես ավանդապահը Հայ եկեղեցու ուղղափառության, եկեղեցական կազմակերպության, մեր ազգային-եկեղեցական կանոնների, միշտ գովելի նախանձախնդրություն է հանդես բերել Մայր Աթոռի դիրքն ու հեղինակությունը իր բարձրության վրա պահելու հարցում: Երուսաղեմի Պատրիարքների փաստորեն հանդիսացել են Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղակալները, և երկու Աթոռները միմյանց հետ կապված են եղել միասնականության, համերաշխության և համագործակցության անփակտելի ուխտերով: Երուսաղեմը եղել է միշտ Մայր Աթոռ Ս. էջմիածնի գուրգուրանքի և սիրո առարկան:

Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանությունը, որպես առաջապահ գունդը Հայ եկեղեցու, և որպես «գինուրեալ միաբանություն», իր կյանքով և արյունով պահել է մեր ազգային-եկեղեցական իրավունքները, հայոցին ու հավատքը:

Սրբոց Հակոբյանց վանքի դարավոր կամարների տակ, միաբանությունը, իր ստեղծագործական աշխատանքներով, նպաստել է նաև հայ մշակույթի, հայ դպրության, հայ լեզվի զարգացման ու պահպանման նվիրական աշխատանքներին: Հայ Երուսաղեմը, Ե դարից ի վեր, հանդիսացել է հայ մշակույթի վառ օջախներից մեկը, և ուր այժմ կան ավելի քան 4000 բնակիչ և արժեքավոր ձեռագրեր, որոնցից շատերը գրչագրված են Ս. Երուսաղեմում վանականների կողմից, և որոնք հայ մանրանկարչական արվեստի անկրկնելի գեղեցկություններն են կազմում:

1833 թվականից ի վեր գործում է Երուսաղեմի տպարանը, լույս ընծայելով հայ ժողովրդի պատմության, բանասիրության, լեզվի, եկեղեցական մատենագրության և ծիսակատարության վերաբերյալ բազմաթիվ արժեքավոր գրքեր:

1868 թվականից սկսյալ Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանը ունեցել է իր պաշտոնական օրգան «Սիռն» ամսագիրը, որն իր հին ու նոր շրջաններով, հարուստ ու հետաքրքիր բովանդակությամբ, հանդիսացել է մեր եկեղեցական մամուլի տարեգրությանց մեջ մեր լուրջ և լավագույն ամսագրերից մեկը:

Երուսաղեմի Հայոց Ժառանգավորաց վարժարանն ու Ընծայարանը, իր ավելի քան հարյուր տարվա գոյության ընթացքում, տվել է Հայ եկեղեցու և հայ դպրության համար բազմակողմանիորեն զարգացած հավատարմորդ ու հայրենասեր, եկեղեցական ու կրթական մշակներ, որոնցից շատերը, այսօր մանավանդ, հասել են բարձր ու պատասխանատու եկեղեցական դիրքերի, որպես հայրապետական պատվիրակ, առաջնորդ, հոգևոր հովիվ:

Երբեմն պատմության ընթացքում Հայ Երուսաղեմի գլխով անցել են նաև փոքորիկներ ու մեծերիկներ: Արքայն ունեցել է իր ազգնայի և նեղության օրերը: Բայց այդ տխուր օրերին, միաբանության լավագույն և խոստովանակից կորիզը կարողացել է միշտ նիշտ կողմնորոշվել և գտնել հարկ եղած բարոյական ուժն ու լույսը՝ դժվարություններից դուրս գալու և Ս. Արքողը նորից դնելու իր բարձր դերի և առաքելության նախապարհի վրա:

Այսօր արդեն ցրվել են վերջին 5—6 ամիսների ընթացքում հայ Երուսաղեմի ջինջ երկնակամարի վրա ժամանակավորապես կուտակված թուխսպ ամպերը, վերացել է սգի սև փողը Պատրիարքական Արքոպի վրայից և մարտի 20-ին, Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի դահլիճում գումարված միաբանական ընդհանուր պատկանելի ժողովը, փվեների բացարձակ մեծամասնությամբ, Երուսաղեմի Հայոց Պատրիարք է ընտրել Պատ-

րիարքական տեղապահ Ամենապատիվ Ս. Տիրան արքեպիսկոպոս Ներսայանին:

Այս արժանավոր ընտրությունը ոչ միայն վերջ տվեց Երուսաղեմի տագնապին, այլև մեծ գոհունակություն պատճառեց Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետին, որն Իրապրիլ 25 թվակիր հայրապետական սրբապատիվ հատուկ շնորհավորական կոնդակով հաստատեց Ս. Տիրան արքեպիսկոպոսի պատրիարքական ընտրությունը Երուսաղեմի Պատրիարքական Արքոպի վրա:

Նորընտիր Սրբազան Պատրիարք Հայրը մեր բարձրաստիճան հոգևորականության շարքում պատվավոր և բարձր տեղ է գրավում որպես ինքնատիպ, տեսիլք ունեցող և հավատավոր հոգևորական, իր բազմակողմանի զարգացմամբ, ազգային-եկեղեցական գործունեությամբ և գրական-հարուզակական վաստակով:

Վստահ ենք, որ Ս. Տիրան արքեպիսկոպոսի պատրիարքությունը Երուսաղեմի Հայոց Սրբոց Հակոբյանց Առաքելական Արքոպի վրա, մի գեղեցիկ էջ ևս կավելացնի Երուսաղեմի Հայ Պատրիարքության պատմության մեջ, Մայր Արքո Ս. էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության հետ սերտ համագործակցությամբ և Հայաստանյայց եկեղեցու սիրտ և միության ոգով:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, հանուն իր բազմահազար ընթերցողների, սրտագին շնորհավորում է Ս. Տիրան արքեպիսկոպոսի պատրիարքական ընտրությունը՝ մաղթելով նորընտիր Սրբազան Պատրիարքին բեղմնավոր ու արդյունաշատ գործունեություն, աննահանջ սիրով ու խորունկ գիտակցությամբ ծառայելու Հայաստանյայց Առաքելական Ս. եկեղեցուն և մեր հավատացյալ հայ ժողովրդին:

«ԹԱԳԱՒՈՐ ԵՐԿՆԱՒՈՐ, ԶԵԿԵՂԵՑԻ ՔՈ ԱՆՇԱՐԺ ՊԱՆԵԱ, ԵՒ ԶԵՐԿՐՊԱԳՈՒՄ ԱՆՈՒԱՆԻ ՔՈՒՄ ՊԱՆԵԱ Ի ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ»:

